ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«12» դեկտեմբերի 2023 թ. N 91-Ն

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԵՎ ՆԵՐԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 6.2 կետի, 32-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 19-ի N 79-Ն որոշման 2-րդ հավելվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Տրամադրել Իսպանիայի Թագավորության «ԼԵՎԱՆՏԻՆԱ ԻՆԽԵՆԵՐԻԱ ԿՈՆՍՏՐՈՒԿՍԻՈՆ Ս.Լ.» ընկերությանը «Մ1 Երևան-Գյումրի-Բավրա, 34 կմ անավարտ ճանապարհահատվածի կառուցում՝ ներառյալ ճանապարհային մաս, ջրահեռացում, կամուրջներ և արտաքին լուսավորություն» օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվություն՝ «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» գործունեության տեսակի «Տրանսպորտային», «Հիդրոտեխնիկական» և «Էներգետիկ» ենթատեսակների համար:

2. 1-ին կետում նշված օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև կնքված պայմանագրով ստանձնած

պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը՝ 2026 թվականի հունիսի 30-ը:

3. Տրամադրել Իսպանիայի Թագավորության «ՕԲՐԱՍ ՊՈՒԲԼԻԿԱՍ Ի ՌԵԳԱԴԻՈՍ Ս.Ա.» ընկերությանը «Մ1 Երևան-Գյումրի-Բավրա, 34 կմ անավարտ ճանապարհահատվածի կառուցում՝ ներառյալ ճանապարհային մաս, ջրահեռացում, կամուրջներ և արտաքին լուսավորություն» օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվություն՝ «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» գործունեության տեսակի «Տրանսպորտային», «Հիդրոտեխնիկական» և «Էներգետիկ» ենթատեսակների համար:

4. 3-րդ կետում նշված օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը՝ 2026 թվականի հունիսի 30-ը:

5. Տրամադրել Գերմանիայի Դաշնային Հանրապետության «ՋԻԷՄՓԻ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ՋԻԷՄԲԻԷՅՋ» մասնավոր սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ակադեմիական քաղաքի համար գլխավոր հատակագծի հետ կապված քաղաքաշինական փաստաթղթերի կազմում» օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվություն՝ «Քաղաքաշինության բնագավառում ինժեներական բաժինների մշակում» գործունեության տեսակի «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի՝ ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր», «Տրանսպորտային օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ տրանսպորտային ուղիներ» և «Էներգետիկ օբյեկտների նախագծային փաստաթղթերի՝ էլեկտրաէներգետիկական համակարգեր» ենթատեսակների համար:

6. 5-րդ կետում նշված օբյեկտում քաղաքաշինական գործունեության իրականացման թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարմանը հաջորդող տասներորդ օրը՝ 2025 թվականի դեկտեմբերի 5-ը:

7. Վերաձևակերպել «ՇԻՐԻՆՇԻՆ» (ՀՎՀՀ 01823378) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող «Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» գործունեության տեսակի N 13633 լիցենզիան և լիցենզիային կից «Բնակելի, հասարակական և արտադրական» ոլորտի N 13633-01 և

«Տրանսպորտային» ոլորտի N 13633-02 ներդիրները՝ անվանման և գտնվելու վայրի փոփոխման հիմքով:

8. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի լիցենզավորման վարչության պետ Նշան Մարտիրոսյանին՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի լիցենզիաների և թույլտվությունների էլեկտրոնային գրանցամատյանում կատարել համապատասխան փոփոխություններ:

9. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

12/12/2023

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ